ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

26 հոկտեմբերի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

151
(2817)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔՈՉԱՐՅԱՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔՆ ԱՃԵԼ Է



Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քաչարյանի՝ 2021 թվականին հայտարարագրված միանձնյա 2 բնակարանը եւ մեկ ավտոտնակը պահպանվել են 2022 թվականի հայտարարագրում: Նկատենք, որ Քոչարյանի միակ եկամտի աղբյուրը ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմից որպես աշխատանքի վարձատրություն ստացած տարեկան 10 մլն 278 հազար դրամն է: Անդրանիկ Քոչարյանի հայտարարագրված որդին՝ Վազգեն Քոչարյանը, տան միակ եկամտի 60%-ով մեքենա է գնել՝ 6 մլն 230 հազար դրամ արժողությամբ, 2015 թվականի արտադրության, VOLVO մակնիշի: Մամուլի հրապարակումների համաձայն՝ Քոչարյանը նաեւ «չհայտարարագրված» եւս մեկ որդի ունի՝ Լեւոն Քոչարյանը, որին շատ արտոնյալ պայմաններով ազատել է զինվորական ծառայությունից: Ըստ մամուլի՝ այն ժամանակ սպասել են, երբ ԲՈԿ-ը հաստատի նրա թեզը (իսկ ԲՈԿ-ը կհաստատեր), եւ Անդրանիկ Քոչարյանի տղան կազատվեր զինծառայությունից, ինչը եղավ: Բանակի հզորացումից օրուգիշեր խոսող Անդրանիկ Քոչարյանն իր որդուն փրկել է զինծառայությունից: Քոչարյանի երիտասարդ որդին՝ Վազգեն Քոչարյանը, որը փաստացի իր հետ է բնակվում, եւ կինը՝ Լուսինե Քոչարյանը, չեն աշխատում, այսինքն՝ տան միակ կերակրողը Անդրանիկ Քոչարյանն է: Վերջինս այնքան շռայլ է սեփական որդիների նկատմամբ, որ տարեկան եկամուտի 60%-ով որդու՝ Վազգենի համար մեքենա է գնել: Սա նշանակում է, որ 2021 թվականին Անդրանիկ Քոչարյանի՝ գործազուրկներով հարուստ ընտանիքին ծախսելու գումար մնացել է ընդամենը 4 մլն դրամ, որն էլ օրական (365 օր) կազմում է 10 հազար 958 ՀՀ դրամ: Հարց է առաջանում, թե ինչպես է ապրել Քոչարյանի 4-հոգանոց ընտանիքը այդ չնչին գումարով: Քոչարյանի որդին, որեւէ եկամուտ չունենալով, նաեւ վարում է, ինչը ծախսեր է ենթադրում: Քոչարյանը նաեւ ունի երկու բնակարան եւ մեկ ավտոտնակ, որոնք եւս ֆինանսներ ծախսելու որոշակի պահանջ ունեն՝ կոմունալներ եւ բնակարանի գույքահարկ: Այսքան ծախսերը դրված է միայն աշխատավարձով ապրող Քոչարյանի ուսերին: Մամուլը նաեւ հրապարակել է կադրեր, թե ինչպես է ժամանակն անցկացնում Քոչարյանը թանկարժեք սրճարաններում եւ ռեստորաններում: Առնվազն կասկածելի է, թե ինչ գումարներով է ապրել 2021 թվականին Անդրանիկ Քոչարյանի ընտանիքը, ով է հովանավորել, ֆինանսավորել, որ ընտանեկան տարրական կարիքները բավարարեն: Նիկոլ Փաշինյանը կասեր՝ կոռուպցիան պոզով ու պոչո՞վ է լինում: Հուսանք՝ Կոռուպցիայի կանխարգելման՝ անգործության մատնված հանձնաժողովը մեկ անգամ որեւէ ՔՊ-ական պատգամավորի գործունեություն կուսումնասիրի եւ պարզաբանումներ կուզի, թե ինչպես է գոյատեւել Անդրանիկ Քոչարյանի ողջ ընտանիքը 4 մլն դրամով:

Երեւանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Նուարդ Վարդանյանը, ինչպես արդեն գրել էինք, հավակնում է Կենտրոն վարչական շրջանի թաղապետի պաշտոնին: Ուսումնասիրելով նրա հայտարարագիրը՝ ուշագրավ տեղեկություններ ենք նկատում: Այսպիսով, Նուարդ Վարդանյանը Երեւանի քաղաքապետարանից ստանում է 65 հազար դրամ գումար՝ որպես աշխատանքի վարձատրություն, սակայն նրա կանխիկ դրամական միջոցները կազմել են 9 մլն դրամ: Ակնջ ծամելու պատրաստակամությամբ հայտնի ավագանու ներկայացուցիչը հայտարարագրել է կրիպտոարժույթ, սակայն հստակ չափը չի մատնանշել, միայն հայտնի է, որ 65000 դրամ համայնքային բյուջեից վճարվող ավագանու անդամը տարեվերջին իր բանկային հաշիվներին ունեցել է 1 մլն դրամ: 2018 թվականի հեղափոխությունից հետո քաղաքական արենա եկած Նուարդ Վարդանյանը 2022 թվականին մի քանի օրվա տարբերությամբ 2 մեքենա է գնել՝ 2018 թվականի արտադրության, Ford մակնիշի: 2021 թվականի նոյեմբերի 9-ին ավագանու անդամ Վարդանյանը նվիրատվություն է ստացել 3 անշարժ գույք՝ 1 բաժնային սեփականության իրավունքով անհատական բնակելի տուն եւ 2 համատեղ սեփականությամբ, ՀՀ օրենսդրության համաձայն, նոր կառուցված, ձեռք բերված եւ անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված ու գնահատված շինություն, որը դեռեւս չի ստացել իրավունքների պետական գրանցում: Նշենք նաեւ, որ 3 անշարժ գույքն էլ գտնվում են Կենտրոն վարչական շրջանում: Թերեւս դժվար չէ ենթադրել, թե ովքեր կարող էին Երեւանի ավագանու քաղշինության եւ հողօգտագործման հարցերի հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանին նորակառույց շենքերում բնակարաններ տալ: Ինչո՞ւ ենք այսպես կարծում. քանի որ դժվար է պատկերացնել, թե ինչպես կարող է շարքային երեւանցին, ստանալով ամսական 65 հազար ՀՀ դրամ վարձատրություն, մի քանի օրում 2 ավտոմեքենա գնել եւ 3 անշարժ գույք նվեր ստանալ: Հավելենք նաեւ, որ Նուարդ Վարդանյանը 2018 թվականից մինչեւ 2021 թվականը որեւէ հայտարարագիր չի ներկայացրել, որը թույլ կտար տեսնել, թե ինչ ունեցվածք ուներ Վարդանյանը ավագանու անդամ դառնալու պահին: Երեւում է, սակայն, թե ինչեր է ձեռք բերել ավագանու անդամի կարգավիճակում: Հաջորդիվ կիրապարակենք, թե ինչ մեխանիզմով է Նուարդ Վարդանյանը նպաստել տարբեր շինթույլտվությունների հաստատմանը: Հին ու մոռացված բարքերն առավել լկտի դրսեւորումներ են ունենում հեղափոխական մեր օրերում: Հիշեցնենք, որ Նուարդ Վարդանյանը ՔՊ-ական պատգամավոր Ծովինար Վարդանյանի քույրն է, ՀՀ նախկին պետնախարար վաղամեռիկ Ժոկոյի՝ Գեւորգ Վարդանյանի դուստրը:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ԱԺ քննիչ հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը հանձնաժողովի անդամներին առաջարկել է Ազգային Ժողովի քննիչ հանձնաժողով կանչել Սամվել Բաբայանին: Նաեւ տեղեկություններ են պտտվում, որ ԱԺ քննիչ հանձնաժողով պետք է կանչվեին Արայիկ Հարությունյանը եւ Ջալալ Հարությունյանը: Արայիկ Հարությունյանը չկանչվեց, քանի որ Արցախում տեղի ունեցած վերջին ռազմական գործողությունների պատճառով ադրբեջանական գերության մեջ է: Ջալալ Հարությունյանն առողջական խնդիրների պատճառով ամեն անգամ չի կարող գնալ ԱԺ, այդ պատճառով էլ նրա մասնակցությամբ եւս հանձնաժողովը նիստ չգումարեց: Հիշեցնենք նաեւ, որ Սամվել Բաբայանին կանչում են Քննիչ հանձնաժողով, քանի որ 44-օրյա պատերազմի ժամանակ ՊԲ նախկին հրամանատար, ՀՀ ՋՈՒ ԳՇ նախկին պետ Մովսես Հակոբյանը հայտարարեց, որ Սամվել Բաբայանը եւ Աննա Հակոբյանը հանդիպել են Փաշինյանի տիկնոջ հրամանատարական կետում, եւ այնտեղ նրանց միչեւ ինչ-որ միջադեպ է տեղի ունեցել: Հավելենք նաեւ, որ ԱԺ քննիչ հանձնաժողովը վերջերս պասիվ գործունեություն է ծավալում:

Կառավարական կաբինետում արդեն տեւական ժամանակ է՝ սպասողական ու լարված վիճակ է: «Ժողովուրդ» օրաթերթը դեռ վաղուց էր գրել, որ ավագանու ընտրություններից հետո Նիկոլ Փաշինյանը մտադիր է անգործություն ցուցաբերած նախարարներին պաշտոնանկ անել: Գրել էինք նաեւ, որ «սեւ ամպեր» են կուտակվել սոցապնախարար Նարեկ Մկրտչյանի, շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանի, ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանի գլխին: Բանն այն է, որ Փաշինյանը համարում է՝ այս նախարարները ողջ ընթացքում անգործություն են ցուցաբերել ու տապալել են իրենց ոլորտը: Հակոբ Սիմիդյանը, բացի շրջագայություններից, իր ոլորտում ոչինչ չի արել, Նարեկ Մկրտչյանը նույնպես տապալել է իր ոլորտը, թեեւ գեղեցիկ խոսում, նկարագրում է, հիմա էլ, մասնավորապես, բռնի տեղահանված արցախցիների խնդիրների լուծումներն են ձախողված համարվում, իսկ Սանոսյանը ոչ միայն անգործություն է ցուցաբերել, այլեւ նախարարությունը դարձրել է իր գյուղի ակումբը: Բանն այն է, որ Փաշինյանին այս ընթացքում դժգոհություններ են հասցրել, որ Սանոսյանը ՏԿԵ նախարարությունում իր ծանոթներին, համագյուղացիներին է տեղավորել, որոնք, առհասարակ, կապ չունեն ոլորտի հետ: Կարճ ասած, զերո պատասխանատվություն: Նիկոլ Փաշինյանի սեւ ցուցակում է հայտնվել նաեւ Անահիտ Ավանեսյանը, որը, սակայն, արդեն համակերպվել է, որ շուտով հրաժեշտ է տալու իր պաշտոնին, ու ջանք էլ չի գործադրում ոլորտում աչքի ընկնելու, որեւէ բան փոխելու համար: Այսպիսով, Նիկոլ Փաշինյանը մտադիր է հեռացնել այս նախարարներին, բայց խնդիրն այն է, որ իր թիմում նրանց փոխարինողներ դեռ չի գտնում: Որեւէ մեկի համար գաղտնիք չէ, որ ՔՊ-ականների մեծ մասն ընդամենը օգնականի կամ խորհրդականի պաշտոններ զբաղեցրած, աշխատանքային ոչ հարուստ փորձով, ոչ պրոֆեսիոնալ մարդիկ են: Տեխնոկրատ, բանիմաց մասնագետներն իրենց տեղը չեն գտնում պետական համակարգում. այն դեգրադացված է:

ԶՐՈՒՅՑ

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ՝ ՊՈՊԿՈՐՆՈՎ

Այսօր՝ սեպտեմբերի 26-ին, նախատեսված է Երեւանի ավագանու արտահերթ նիստը, որի ընթացքում ընտրվելու են փոխքաղաքապետեր:

Հիշեցնենք, որ փոխքաղաքապետերի թեկնածուներն են ավագանու ՔՊ խմբակցության անդամներ Արմեն Փամբուխչյանը, Լեւոն Հովհաննիսյանը, Սուրեն Գրիգորյանը եւ «Հանրապետություն» խմբակցության անդամ Սարգիս Մադաթյանը:

Տիգրան Ավինյանի՝ քաղաքապետ ընտրվելուց հետո հրավիրված ավագանու նախկին եւ սպասվելիք նիստերի արդյունքերի, ակնկալիքների մասին «Ժողովուրդ» օրաթերթը հեռախոսազրույց է ունեցել «Հաղթանակ» կուսակցության նախագահ, քաղաքապետի նախկին թեկնածու, քաղաքային պլանավորող Վիկտոր Մնացականյանի հետ:

-Կուզեմ անդրադառնանք ավագանու վաղվա նիստին. տեղյա՞կ եք՝ կոնկրետ ինչ են քննարկելու քաղաքային իշխանությունները վաղվա արտահերթ նիստում, մանրամասներ Ձեզ հայտնի՞ են:

-Գիտեմ, որ փոխքաղաքապետեր եւ վարչական շրջանների ղեկավարներ պիտի ընտրեն:

-Այդուամենայնիվ, քանի որ հայտնի է, որ փոխքաղաքապետեր պետք է ընտրվեն, եւ վարչական շրջանների ղեկավարներ նշանակվեն, ինչպե՞ս եք գնահատում հայտնի թեկնածուների պոտենցիալը:

-Բոլոր թեկնածուներին, ճիշտն ասած, չգիտեմ: Սարգիս Մադաթյանին անձնապես ճանաչում եմ՝ որպես մարդ. դրական կարծիքի եմ: Նաեւ Արմեն Փամբուխչյանին գիտեմ, որի արժանիքները, կարծում եմ, առավելապես ընդգծված են: Նա նոր մարդ է, թարմ դեմք է, որը կկարողանա քաղաքացի-ավագանի-քաղաքապետ կապը պահել: Տեղակալների թեկնածուներից մնացածին չգիտեմ, բայց կարծում եմ՝ նրանցից ու նրանց ղեկավարումից շատ բան է կախված, որովհետեւ քաղաքապետի «մատից փուշ հանողը» հենց նրանք են: Ցավոք, չի կարող լեգիտիմ իշխանություն լինել, եթե 4 փոխքաղաքապետերից 3-ի վրա, եթե չեմ սխալվում, քրեական գործ ու ծանր մեղադրանքներ (կոռուպցիա, հովանավորչություն եւ այլն) կան: Եթե չեմ սխալվում, քաղաքապետարանի մի քանի վարչության պետերի վրա էլ քրեական գործեր կան: Այսինքն՝ երեւանցին ո՞նց հավատա: Առանց այդ էլ վստահության խնդիր ունեն, որովհետեւ պատմության մեջ առաջին անգամն է, որ քաղաքապետն ընտրվեց 9% ձայնով, նույնիսկ 10% էլ չկարողացան հավաքել: Վարչական շրջանի ղեկավարներին էլ չգիտեմ, բայց մի բան գիտեմ, որ եթե վարչական շրջանի լավագույն ղեկավարին էլ բերեն, որը լավագույնս կկատարի իր լիազորությունները, միեւնույնն է, այդ լիազորությունները այնքան աղքատիկ են, որ բացարձակ արդյունքի հասնել չեն կարող, մինչեւ տոտալ ռեֆորմ չարվի:

-Պարոն Մնացականյան, այս ընթացքում՝ Տիգրան Ավինյանի՝ քաղաքապետ դառնալուց հետո, մի քանի վարչական շրջանների ղեկավարներ դադարեցրին իրենց գործունեությունը՝ տարբեր հանգամանքներով պայմանավորված: Ի՞նչ եք կարծում, պատճառը ո՞րն էր: Արդյոք նրանք չէի՞ն անում այն, ինչ պիտի անեին՝ գնալով իշխանության նախատեսված պլանին կամ հոսանքին հակառակ:

- Ես նույնիսկ չգիտեմ՝ ում են հանել կամ արդյոք հանել են, թե, կապված կուսակցական այս հուշագրի կնքման հետ, կադրային փոփոխություն է եղել: Համենայնդեպս, ես չգիտեմ այնպիսի դեպք, որ 12 վարչական շրջանի ղեկավարներից գոնե մեկը նկատողություն, բողոք ստանա, կամ անվստահություն հայտնեն քաղաքապետը կամ ավագանին: Կարծես բոլորը բոլորից գոհ են այդ նիստերում, բայց գոնե նորերին նշանակելիս էլ հստակ իմանան՝ որին որ արժանիքի համար են նշանակում:

-Պարոն Մնացականյան, անդրադառնանք ավագանու նախորդ նիստին, որի արդյունքում Տիգրան Ավինյանը դարձավ քաղաքապետ. դա սպասելի՞ էր Ձեզ համար:

-Ես չգիտեմ՝ որն է ավելի ամոթ՝ այն, որ Դոգի «Հանրային ձայն»-ն է «Քաղաքացիական պայմանագրի» հետ համագործակցում, թե «Քաղաքացիական պայմանագիր»-ը՝ «Հանրային ձայն»-ի: Ինչքան էլ ասում են՝ դա այդպես չէ, միեւնույնն է, ժողովրդին հիմարի տեղ չեն դնի, պետք է տղամարդկություն ունենալ, խոստովանել ամեն բան: Վատն այն է, որ երեւանցին հերթական անգամ խաբվեց: Կիսաամոթ ավագանու նիստեր են կայանալու: Վաղը նիստ կա. կարծում եմ՝ ադի-բուդին կառնեմ, կնստեմ, կնայեմ ավագանու նիստը, ու ինձ նման շատ երեւանցիներ, որովհետեւ վստահաբար շատ հետաքրքիր ու թեժ է անցնելու, բայց արդյոք դրանից Երեւանը կշահի՞:

Զրուցեց ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԸ

Ի՞ՆՉ Է ՔՆՆՈՒՄ ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ

Դավիթաշեն վարչական շրջանի ղեկավար Ռոման Համբարձումյանի օգնական Կորյուն Մխիթարյանի վրա կրակելու գործով: Լուրեր կան, որ իրավապահները ձգձգում են գործը դատարան ուղարկելը, քանի որ ջանքեր են դրվում կողմերին հաշտեցնելու համար, որպեսզի այդպես կարողանան քրեական գործով անցնողների մեղադրանքները թեթեւացնել:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ այս միջադեպը բավականին խոր արմատներ ունի. միայն թաղապետի օգնականի վրա կրակելու վարկածը չէ, որ քննում են իրավապահները: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Դավիթաշենի թաղապետի օգնական Կորուն Մխիթարյանն իր շրջապատի մի քանի մարդկանց հետ կռիվ է արել: Մասնավորապես, թաղապետի օգնականը ծեծի է ենթարկել Կոտայքի մարզի մի բնակչի՝ Ս. Ս.-ին՝ կոտրելով նրա ոտքերը:

Ու թեեւ իրավապահները քննում են վարկած, թե թաղապետի օգնականը հողակտորում շինարարության համար է կռվի մեջ ընկել, եւ կրակել են նրա վրա, այնուամենայնիվ, պարզվում է՝ դրանից առաջ էլ կա նախապատմություն:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Ռոման Համբարձումյանի օգնականի վրա ուղղված՝ մայիսի 19-ի կրակոցների գործով իրավապահները իրական կրակողին հունիսի 10-ին չէին գտել եւ որոշել էին կալանավորել Կոտայքի բնակիչ Ս. Ս.-ին, որպեսզի իրական կրակողը գար, ներկայանար: Կասկածներ ունեն, որ ոտքերը կոտրած քաղաքացու մտերիմներն են հաշվեհարդար տեսել թաղապետի օգնականի նկատմամբ: Մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ իրավապահների մոտ տվյալներ կան՝ միջադեպի օրը Դավիթաշենի թաղապետ Ռոման Համբարձումյանի օգնական Կորյուն Մխիթարյանն է առաջինը մեքենայից կրակոցներ արձակել, երբ փայտերով հարձակվել են իր մեքենայի վրա: Իսկ թե ինչ զենքով է կրակել, մեզ դեռ չհաջողվեց պարզել: Ստացվում է, չի բացառվում, որ թաղապետի օգնականը քրեական գործով հետագայում տուժողից դառնա մեղադրյալ: Ինչեւէ, կոմիտեից «Ժողովուրդ» օրաթերթը հետաքրքրվեց, թե գործը ինչ փուլում է: Ի պատասխան՝ հայտնեցին՝ նախաքննություն է ընթանում. նշանակված են փորձաքննություններ, որոնց եզրակացությունները դեռեւս չեն ստացվել:

Հիշեցնենք, որ այս տարվա մայիսի 19-ին մի խումբ անձինք, դարանակալելով «Վոլսկվագեն տուարեգ» մակնիշի ավտոմեքենային, որի ղեկին եղել է թաղապետի օգնական Կորյուն Մխիթարյանը, մահակներով վնասել են հիշյալ ավտոմեքենան, իսկ 30-ամյա տղամարդն իր մոտ գտնվող հրազենով կրակել է ավտոմեքենայի ուղղությամբ, որի հետեւանքով թաղապետի օգնականի թիկունքային հատվածում պատճառվել է մարմնական վնասվածք: Ըստ ՀՀ քննչական կոմիտեի հայտնած տեղեկության՝ դեպքին մոտ 2-3 ամիս առաջ նախորդել է հողակտորի հարցի շուրջ 41-ամյա տղամարդու եւ մի 30-ամյա տղամարդու միջեւ սուր վիճաբանություն:

Ըստ ArmLur.am-ին հասած տեղեկությունների՝ քաղաքացին հողակտոր է ունեցել, որի վրա շինարարություն է կատարել, եւ թաղապետ Ռոման Համբարձումյանի օգնական Մխիթարյանը (չի բացառվում՝ հենց Ռոման Համբարձումյանի հանձնարարությամբ) անընդհատ միջամտել է, խոչընդոտել քաղաքացուն: Թաղապետի տեղակալ Հրաչյա Հակոբյանը մեզ հետ զրույցում պնդում է, որ թաղապետի օգնականը հողակտորի զավթման հետ որեւէ առնչություն չունի եւ չի ունեցել, եւ իրենց համար կատարվածը առեղծված է:

ԸՆԴԴԵՄ

ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ԱԴՐԲԵՋԱՆԸ

Ադրբեջանի դեմ հնարավոր պատժամիջոցների հարցն այժմ դրված է սեղանին: Կանադան ուշադրությամբ հետեւում է Հարավային Կովկասում տեղի ունեցող զարգացումներին եւ ակնկալում, որ կհարգվի Հայաստանի տարածքային ամբողջականությունը:

Ինչպես հաղորդում է «Ժողովուրդ» օրաթերթը, Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի հետ համատեղ ասուլիսի ժամանակ այդ մասին ասաց Կանադայի արտաքին գործերի նախարար Մելանի Ջոլին:

«Ադրբեջանի դեմ հնարավոր պատժամիջոցների հարցն այժմ դրված է սեղանին: Կանադան բարձր է գնահատում Հայաստանի ջանքերն՝ ուղղված խաղաղության եւ կայունության ամրապնդմանը Հարավային Կովկասում: Բոլորս համակարծիք ենք, որ դեռ պետք է ավելին անել: Կանադան կոչ է անում Ադրբեջանին լիարժեքորեն հարգել Հայաստանի տարածքային ամբողջականությունը եւ վերահաստատում է ուժի եւ ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքին հետեւելու կարեւորությունը: Կանադան նաեւ կոչ է անում Ադրբեջանի կառավարությանը հարգել Լեռնային Ղարաբաղից վերջերս տեղահանված հայերի վերադարձի իրավունքը եւ բարի կամք դրսեւորելով՝ ապահովել մարդասիրական օգնությունների անխոչընդոտ հասանելիությունը Լեռնային Ղարաբաղին, ինչպես նաեւ ապահովել հայերի անվտանգ վերադարձը Լեռնային Ղարաբաղ: Մեր գործընկերների հետ շարունակաբար աշխատում ենք, որպեսզի մեղմենք Ադրբեջանի կողմից քաղաքացիական անձանց նկատմամբ չհիմնավորված ռազմական օպերացիայի հետեւանքները, առավել եւս, որ Լեռնային Ղարաբաղի բնակիչներն ամիսներ շարունակ գտնվում էին անօրինական շրջափակման մեջ»,- ասաց Կանադայի արտգործնախարարը:

Նա հավաստիացրեց, որ շարունակաբար աշխատում են, որպեսզի հակամարտության համար բանակցությունների միջոցով գտնվի տեւական լուծում: Նրա խոսքով՝ այսօր առավել քան երբեւէ կարեւոր է, որ Կանադան եւ ամբողջ աշխարհը ցույց տան իրենց աջակցությունը հայ ժողովրդին՝ 1915 թվականի ցեղասպանության հետեւանքները կրած անձանց սերունդներին, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղից հեռացած համայնքներին, ինչի արդյունքում այժմ առաջացել է մարդասիրական ճգնաժամ:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

Երեւանի ավագանին այսօր՝ հոկտեմբերի 26-ին, արտահերթ նիստ է հրավիրել: Օրակարգում փոխքաղաքապետերի ընտրության հարցն է:

Արդեն հայտնել ենք, որ այս պաշտոններում Տիգրան Ավինյանն առաջարկել է Արմեն Փամբուխչյանի, Սուրեն Գրիգորյանի, Լեւոն Հովհաննիսյանի եւ «Հանրապետություն» կուսակցությունից Սարգիս Մադաթյանի թեկնածությունները:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Անդրանիկ Թեւանյանի «Մայր Հայաստան» դաշինքը չի մասնակցելու նիստին:

Տեղեկացանք, որ «Հանրային ձայն»-ը մասնակցելու է նիստին:

«Ազգային առաջընթաց» կուսակցությունից նույնպես մեզ ասացին, որ մասնակցելու են նիստին: Հարցին, թե Հայկ Մարությանը նույնպես գալու է, Հովսեփ Կուբաթյանն ասաց, որ դեռ չեն որոշել:

Հավելենք, որ ըստ «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի՝ քաղաքապետի տեղակալներին ներկայացնում է քաղաքապետը, նշանակում կամ ընտրում է Երեւանի ավագանին:

ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՏՎԵՑ

Երեկ մամուլում լուրեր տարածվեցին, որ Ռուսաստանի Դաշնության Պետդումայի պատգամավորները որոշել են անորոշ ժամանակով հետաձգել Հայաստանի քաղաքացիների՝ ձեռնարկատիրական եւ աշխատանքային գործունեություն իրականացնելիս ազգային վարորդական վկայականները ճանաչելու մասին օրինագծի քննարկումը:

Մինչդեռ, 2022 թվականի օրինագծով առաջարկվում էր Հայաստանին տալ լրացուցիչ նախապատվություններ՝ չնայած այն հանգամանքին, որ հանրապետության պատգամավորները, ղեկավարությունն ու կառավարությունը ոչ մի քայլ չեն ձեռնարկել ռուսաց լեզվի կարգավիճակի ամրապնդման ուղղությամբ: Հենց այս հիմքով էր, որ Ռուսաստանի Դաշնության Պետդուման որոշեց թույլատրել այլ երկրների վարորդական իրավունքի վկայականների օգտագործումը Ռուսաստանի տարածքում:

Ներկայացուցիչների պալատի նախագահ Վյաչեսլավ Վոլոդինը լրագրողների այն հարցերին, թե որքանով այս որոշումը կապ ունի Հայաստանի կողմից Հռոմի ստատուտի վավերացման հետ, մեկնաբանել է. «Մենք նման որոշումներ ենք կայացրել Բելառուսի, Ղազախստանի եւ Ղրղզստանի հետ կապված, քանի որ այս պետությունները ռուսաց լեզուն սահմանադրորեն ամրագրել են: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա մենք տեսնում ենք, որ ռուսաց լեզվի կարգավիճակի հարցի վերաբերյալ որեւէ լուծում չկա, իսկ Հայաստանի կողմից կայացված վերջին որոշումներն ամենեւին ուղղված չեն այս ոլորտում հարաբերությունների զարգացմանը»,- ասաց Պետդումայի նախագահ Վյաչեսլավ Վոլոդինը:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՉԻ ԿԱՅԱՆԱ

Հոկտեմբերի վերջին Բրյուսելում նախատեսված Հայաստանի եւ Ադրբեջանի առաջնորդների հանդիպումը տեղի չի ունենա, այն հետաձգվում է: Այդ մասին հայտարարել է Հարավային Կովկասի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարը «Առաջընթաց անորոշության պայմաններում» խորագրով համաժողովի ժամանակ:

Նրա խոսքով՝ հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացն Արեւմուտքի միջնորդությամբ դանդաղ, սակայն ճիշտ ուղղությամբ է ընթանում: Նա դրական գնահատեց Գրանադայում բանակցությունները, որին, սակայն, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը չմասնակցեց:

Այնուամենայնիվ, Կլաարը հույս ունի, որ բանակցությունները կշարունակվեն, որոնց վերջնաարդյունքը կլինի Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագրի ստորագրումը: Կլաարը նաեւ դրական գնահատեց վերջերս Թեհրանում «3+3» ձեւաչափով կայացած հանդիպումը.

«Դա օգտակար ենք համարում եւ այն հակասող չեմ համարում որեւէ ձեւաչափի: Կարծում եմ՝ կարեւոր եւ օգտակար են հարեւանների միջեւ քննարկումները: Մենք սկզբունքորեն մշտապես համագործակցության օգտին ենք արտահայտվում»,- ասաց նա:

Հոկտեմբերի 25-ին Կանադայի ԱԳՆ ղեկավարի հետ համատեղ ասուլիսում Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանը եւս մեկ անգամ հաստատել է տեղեկությունը՝ պատասխանելով հարցին, թե ով չի հասցնում մասնակցել նախապես հայտարարված հանդիպմանը:

Հարցին, թե ով ժամանակ չունի հանդիպման համար, կամ գուցե պատճառն այլ է, օրինակ՝ Ադրբեջանը նոր պահանջներ է առաջադրում, ասենք, կապված «Զանգեզուրի միջանցքի» հետ, նախարարը նշեց, որ պատասխանը պարզ ու հստակ է՝ ակնհայտորեն Ադրբեջանի նախագահը ժամանակ չի գտել:

«Մենք դեռ պատրաստ ենք հանդիպմանը: Հուսով եմ՝ պատճառը իսկապես ժամանակի սղությունն է: Իսկ հանդիպման նոր ժամկետներ որոշելու հնարավորություն կլինի: Հայաստանը պատրաստ է հանդիպմանը, ինչպես արդեն ասել եմ, մենք հավատարիմ ենք խաղաղության օրակարգին»,- ընդգծեց Միրզոյանը:

Նա հավելեց, որ Գրանադայի հայտարարության մեջ, մեծ հաշվով, նորություն չկա. այն սկզբունքները, որոնք հնչել են հուլիսին կայացած եռակողմ հանդիպումից հետո, կրկնվել են, իսկ դրանից հետո որեւէ առարկություն չի եղել Ադրբեջանի եւ Հայաստանի կողմից:

«Մենք երկու օր առաջ ոչ պաշտոնական շփումներ ունեցանք Թեհրանում, եւ Հայաստանը պատրաստ է արագորեն շարունակել խաղաղության գործընթացը, այդ թվում՝ խաղաղության պայմանագրի ձեռք բերման ուղղությամբ: Մեր մոտեցումները հայտնի են»,- ասաց Միրզոյանը՝ հավելելով, որ ապագայում պարզ կդառնա՝ արդյոք հարցը իսկապես ժամանակի մեջ է:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԱՀԱՑԵԼ Է ԿԱՐՄՐՈՒԿԻՑ

Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը Ազգային ժողովում լրագրողների հետ զրույցում հայտարարեց, որ Հայաստանում կարմրուկից 2 տարեկան երեխա է մահացել:

Նախարարի խոսքով՝ երեխան պատվաստված չի եղել:

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ⇨ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես հայտնում է Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության կայքէջը, Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը հեռախոսազրույց է ունեցել Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Ջեյհուն Բայրամովի հետ: Զրույցի ընթացքում քննարկել են Բաքվի եւ Երեւանի միջեւ հարաբերությունների կարգավորման հարցերը:

«Հաստատվել է 2020-2022 թվականների համար ամենաբարձր մակարդակով եռակողմ համաձայնագրերի հիման վրա Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունների կարգավորմանն ուղղված ջանքերի ավելացման անհրաժեշտությունը»,- ասված է նախարարության հաղորդագրության մեջ:

Բացի այդ, նախարարները բարձր են գնահատել հոկտեմբերի 23-ին Թեհրանում արտգործնախարարների մակարդակով տարածաշրջանային «3+3» հարթակի հանդիպման արդյունքները՝ պայմանավորվելով շարունակել հետագա ռիթմիկ աշխատանքը այս ձեւաչափը խթանելու համար:

Հանդիպման շրջանակներում, ինչպես ավելի վաղ հայտնել էր ՌԴ ԱԳՆ-ն, Լավրովը կարճատեւ զրույց է ունեցել նաեւ Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանի հետ:

ԱՅՑԵԼԵՑԻՆ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ

Պաշտոնական այցով Հայաստան ժամանած Կանադայի ԱԳ նախարար Մելանի Ժոլիի գլխավորած պատվիրակությունը հոկտեմբերի 25-ին այցելել է Հայոց ցեղասպանության հուշահամալիր՝ ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի եւ ՀՀ-ում Կանադայի արտակարգ եւ լիազոր դեսպան Էնդրյու Թըրների ուղեկցությամբ: Այդ մասին հայտնում են Ցեղասպանության թանգարան-ինստիտուտից:

Հյուրերին դիմավորել է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Էդիտա Գզոյանը:

Երկու երկրների նախարարները ծաղկեպսակներ են դրել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթողին, այնուհետեւ հյուրերը ծաղիկներ են դրել անմար կրակի մոտ եւ մեկ րոպե լռությամբ հարգել Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը:

Հյուրերը շրջել են Հիշողության պուրակում, որտեղ Կանադայի ԱԳ նախարար Մելանի Ժոլին ջրել է Կանադայի վարչապետ Ջասթին Թրյուդոյի՝ 2018 թ. տնկած արծաթափայլ եղեւնին:

Շնորհակալություն հայտնելով այցի համար՝ ՀՑԹԻ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Էդիտա Գզոյանը պատվավոր հյուրին է նվիրել Հայոց ցեղասպանության մասին գրքեր:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ԼՂ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ

«Ժողովուրդ» օրաթերթին ՀՀ քննչական կոմիտեն տեղեկացրել էր, որ հոկտեմբերի 20-ին Երեւանում՝ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցչության շենքի դիմաց մի խումբ անձանց մասնակցությամբ տեղի ունեցած առերեւույթ խուլիգանական, բռնության գործադրման, ինչպես նաեւ հափշտակության դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 195-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 254-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 4-րդ կետերով եւ 456-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Նախաքննության արդյունավետությունն ապահովելու նպատակով ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում ձեւավորվել է քննչական խումբ: Մեկ անձ՝Կ.Շ.-ն, ճանաչվել էր տուժող:

Ոստիկանության ծառայողների կողմից դեպքի վայրից մի խումբ անձինք տարվել էին ոստիկանության բաժին, ապա՝ ներկայացվել վարույթն իրականացնող մարմնին: Որոշում էր կայացվել՝ հանցավոր արարքներ կատարելու մեջ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածանքի հիմքով թվով 10 անձի ձերբակալելու վերաբերյալ:

Նախաքննությամբ իրականացված մեծածավալ քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ ձերբակալված վերոնշյալ անձանցից երկուսը՝Ա.Ղ.-ն եւ Ն.Ա.-ն, հոկտեմբերի 20-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, մասնակցել են Երեւանի քաղաքի Նաիրի Զարյան 17 հասցեում գտնվող Լեռնային Ղարաբաղի ներկայացուցչության վարչական շենքի մոտ իրականացվող հավաքին: Տեսնելով տուժող Կ.Շ.-ին՝ քննությամբ դեռեւս հստակ չպարզված հարցի շուրջ վիճաբանել են վերջինիս հետ եւ, կապված Կ. Շ.-ի պաշտոնեական, քաղաքական գործունեության հետ, Ա.Ղ.-ն եւ Ն.Ա.-ն քննությամբ դեռեւս չպարզված անձանց հետ խմբի կազմում, իրավական եւ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելով եւ համակեցության կանոնների ցուցադրաբար անտեսմամբ, հայհոյանքներ եւ անպարկեշտ արտահայտություններ հնչեցնելով, անտեսելով հասարակական կարգի ապահովման համար ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողների ներկայությունը, մարդկանց անդորրը խախտելով, ինչպես նաեւ հարակից հատվածում գտնվող հասարակական նշանակության օբյեկտների բնականոն աշխատանքը խոչընդոտելով, կատարել են խուլիգանություն: Դրա ընթացքում նշված երկու անձինք, քննությամբ դեռեւս չպարզված անձանց հետ խմբի կազմում փոխլրացնելով միմյանց գործողությունները, ձեռքերով հարվածներ են հասցրել Կ. Շ.-ին՝վերջինիս պատճառելով ֆիզիկական ցավ եւ մարմնական վնասվածքներ:

Միջնորդություն է ներկայացվել հսկող դատախազին՝ վերոնշյալ հանցավոր արարքները կատարելու համար Ա.Ղ.-ի եւ Ն.Ա.-ի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ, որը բավարարվել է: Նշված անձանց մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (մի խումբ անձանց կողմից խուլիգանություն կատարելը) եւ195-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 5-րդ կետերով (անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ մի խումբ անձանց կողմից հարվածներ հասցնելը կամ բռնի այլ գործողություններ կատարելը՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ):

Դատարանի որոշմամբ՝ Ա.Ղ.-ի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը՝ բավարարելով վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը, իսկ Ն.Ա.-ի նկատմամբ՝ տնային կալանքը:

Ձերբակալված մյուս 8 անձինք արգելանքից ազատ են արձակվել:

ԿԱՐԵՎՈՐ

ՀԱՓՇՏԱԿԵԼ Է ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ

«Մոսէսդո» ՍՊ ընկերության սեփականատեր Կ.Գ.-ն 2017 թվականին Պաշտպանության նախարարության կարիքների համար ներկրվող նյութական միջոցների ընդունման հանձնաժողովի նախագահ, N զորամասի հրամանատար Ռ.Բ.-ի, հանձնաժողովի անդամներ հրամանատարի տեղակալ-գլխավոր ինժեներ Ա.Պ.-ի, Վառելիքաքսուքային նյութերի պահպանման բաժնի պետ Ա.Ա.-ի եւ պահեստապետ Ս.Կ.-ի օժանդակությամբ Պաշտպանության նախարարությունից հափշտակել է 59 մլն 582 հազար 840 դրամ: Բացի այդ, Կ.Գ.-ն պատրաստել եւ օգտագործել է կեղծ փաստաթղթեր, օժանդակել է հանձնաժողովի անդամների եւ պահեստապետի կողմից պաշտոնեական կեղծիք կատարելուն:

Մասնավորապես, 2017 թվականի հուլիսի 4-ին «Մոսէսդո» ՍՊ ընկերության եւ Պաշտպանության նախարարության միջեւ կնքվել է 94 մլն 320 հազար դրամով 240 տոննա հակասառիչ նյութի մատակարարման պայմանագիր: Պայմանագրով ընկերությունը պարտավորվել է սահմանված կարգով եւ ժամանակացույցով 80 հազար կիլոգրամը մատակարարել 2017 թվականի հուլիսին, իսկ 160 հազար կիլոգրամը՝ 2017 թվականի 3-րդ եռամսյակում:

Համաձայն «Մոսէսդո» ՍՊ ընկերության եւ Պաշտպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումների կողմից կազմված փաստաթղթերի՝ վերոնշյալ պայմանագրի հիման վրա՝ «Մոսէսդո» ՍՊ ընկերությունը 2017 թվականին, իբր, մատակարարել է 240 հազար կիլոգրամ հակասառիչ նյութ, մինչդեռ «Մոսէսդո» ընկերությունը 2017 թվականին Հայաստանի Հանրապետություն է ներմուծել 116 հազար 900 կիլոգրամ հակասառիչ նյութ, որից Պաշտպանության նախարարությանը մատակարարվել է 105 հազար 810 կիլոգրամը (105 հազար 810 կիլոգրամից 20 հազար 790 կիլոգրամը հետ է վերադարձվել):

«Մոսէսդո» ՍՊ ընկերությունը 2017 թվականին Հայաստանի Հանրապետության տարածքում մատակարարման ենթակա հակասառիչ նյութի ձեռքբերում չի ունեցել:

Չնայած այն հանգամանքին, որ ընկերությունը Պաշտպանության նախարարությանն իրականում չի մատակարարել նախատեսված 240 հազար կիլոգրամից 154 հազար 980 կիլոգրամը՝հանձնաժողովի նախագահ, զորամասի հրամանատար Ռ.Բ.-ն,հանձնաժողովի անդամներ Ա.Պ.-ն, Ա.Ա.-ն եւ Ս.Կ.-ն, շահադիտական նպատակով կազմել եւ ստորագրել են կեղծ փաստաթղթեր՝ ընկերության կողմից զորամասին 154 հազար 980 կիլոգրամ հակասառիչ նյութ մատակարարված լինելու վերաբերյալ:

Արդյունքում Կ.Գ.-ն հանձնաժողովի նախագահ, զորամասի հրամանատար Ռ.Բ.-ի, անդամներ հրամանատարի տեղակալ-գլխավոր ինժեներ Ա.Պ.-ի, Վառելիքաքսուքային նյութերի պահպանման բաժնի պետ Ա.Ա.-ի եւ պահեստապետ Ս.Կ.-ի օժանդակությամբ Պաշտպանության նախարարությունից խարդախությամբ հափշտակել է առանձնապես խոշոր չափերի՝59 մլն 582 հազար 840 դրամ:

ՔՆՆՉԱԿԱՆ

ԹՄՐԱՆՅՈՒԹ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Ոստիկանության Մասիսի բաժնի համայնքային ոստիկանները տեղեկություններ էին ստացել, որ Նորամարգ գյուղի 33-ամյա մի բնակիչ թմրանյութ է պահում ու օգտագործում: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում հոկտեմբերի 22-ին Մասիսի 7-րդ փողոցում նա հայտնաբերվեց, ձերբակալվեց եւ տեղափոխվեց բաժին: Ոստիկանությունից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվել է Մարիխուանայի նման զանգվածով ապակե տարա:

Տղամարդը հայտնել է, որ այն թմրանյութ է՝ պատրաստված վայրաճ բույսերից: Նա նաեւ իրավապահներին հայտնել է, որ թմրանյութ ունի իր «ՎԱԶ-2107» մակնիշի ավտոմեքենայում:

Դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում զննություն է կատարվել նորամարգցու տանը եւ մեքենայում: Մեքենայից հայտնաբերվել է 466 գրամ կանեփանման զանգվածով լցված տարա, իսկ բնակարանից՝476 գրամ կանեփանման բույսեր եւ տերեւներ, կաթուցիչներ ու հարմարեցված շիշ:

Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ՓՈՐՁԵԼ Է ԻՆՔՆԱՍՊԱՆ ԼԻՆԵԼ

Հոկտեմբերի 21-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել «Զվարթնոց» օդանավակայանում. ժամը 18:50-ի սահմաններում քաղաքացիները օդանավակայանի մեկնման սրահում գտնվող սանհանգույցում կանխել են քաղաքացու ինքնասպանության փորձը. վերջինս պատին ամրացված կախիչից գոտիով փորձել է կախվելու միջոցով ինքնասպանություն գործել. հաղորդում է Shamshyan.com-ը:

Քաղաքացիների կողմից փրկվածը Ալժիրի Հանրապետության քաղաքացի, 44-ամյա Ամեր Ը.-ն է:

Դեպքի փաստով ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնում ձեւակերպվել են փաստաթղթեր, որոնք փոխանցվել են Հայաստանի քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության «Զվարթնոց» գծային բաժնի քննչական բաժին:

ՄԱՀԱՑԱՎ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ

Հոկտեմբերի 19-ին՝ ժամը 19.10-ին, Երեւանի Էրեբունու փողոցում «Տոյոտա» մակնիշի մեքենայի վարորդը վրաերթի էր ենթարկել 63-ամյա Հրաչիկ Հարությունյանին, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել էր հիվանդանոց:

Ոստիկանությունից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ հոկտեմբերի 23-ին հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ նա մահացել է:

Կատարվում է նախաքննություն:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հոկտեմբերի 24-ից 25-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 60 դեպք, որոնցից 3-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԿՈՎԵՐՆ ՈՒ ՁԻԵՐԸ՝ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Դիլիջան-Իջեւան հատվածում՝ Դիլիջան համայնքի տարածքում, կովերի նախիրները, ձիերի երամակները անարգել մտնում են ճանապարհի երթեւեկելի գոտի, ստեղծում վթարային իրավիճակներ: Միջպետական ճանապարհին թափառող անասունների պատճառով տարիների ընթացքում տեղի են ունեցել ճանապարհատրանսպորտային շատ պատահարներ: Հոկտեմբերի 24-ին եւ 25-ին անցել ենք այդ ճանապարհով, երկու օրերին էլ Դիլիջան քաղաքի հարավային ծայրին տեսել ենք ճանապարհին թափառող կովեր: Նմանապես կովերի նախիրներ ենք տեսել Դիլիջան համայնքի Հովք գյուղի հատվածում: Այս տարվա օգոստոսին միջպետական ճանապարհին թափառող կովերի նախիրների, ձիերի երամակների, Դիլիջան քաղաքում թափառող, անտեր շների վերաբերյալ տեղեկատվական հարցում ենք ուղարկել Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանին: Համայնքի ղեկավարի պատասխանում նշված է. «Համայնքապետարանի կողմից ամենօրյա ռեժիմով կազմակերպվում են վերահսկման եւ կանխարգելման աշխատանքներ հնարավորինս արգելելու կովերի եւ ձիերի մուտքը բանուկ, երթեւեկելի տարածքներ, իսկ թափառող շների համար իրականացվում են ստերջացման աշխատանքներ, որը կրելու է շարունակական բնույթ»: Համայնքապետարանն ինչպե՞ս է ամենօրյա ռեժիմով իրականացնում երթեւեկելի տարածքներ կովերի ու ձիերի մուտքերը կանխելու վերահսկման ու կանխարգելման աշխատանքներ, եթե արդյունքում Դիլիջան քաղաքում եւ Դիլիջան-Հովք հատվածում թափառող կովերի ու ձիերի քանակը չի նվազում:

ՉԵՆ ՆՈՐՈԳՈՒՄ

Իջեւան-Բերդ միջպետական ավտոճանապարհի Վազաշեն-Պառավաքար հատվածի մի մասը ձգվում է ադրբեջանական դիրքերի դեմ-դիմաց, ադրբեջանական գնդակոծություններից այդտեղ նախկինում զոհեր եւ վիրավորներ են եղել: Այդ սահմանամերձ, վտանգավոր ճանապարհով երթեւեկը դիմացի բարձունքներում ամրացած ադրբեջանական զինուժից պաշտպանելու համար կառուցվել է Վազաշեն-Պառավաքար շրջանցիկ, ոլորապտույտ ավտոճանապարհը, որի սկզբանամասում գաբիոններով կառուցվել է անվտանգության մեծ, երկար պատ: Այդ պատը նախատեսված է շրջանցիկ ավտոճանապարհի սկզբնամասի հակառակորդի կողմից դիտարկվող հատվածը ադրբեջանական գնդակոծություններից պաշտպանելու համար: Տարիներ շարունակ այդ անվտանգության պատի մեծ հատվածը քանդված է: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք ուղարկել, թե երբ է վերականգնվելու այդ պատը: Մարզպետի պատասխանում գրված է. «Վազաշեն-Պառավաքար շրջանցիկ ճանապարհի գաբիոնե հենապատի եւ երթեւեկամասի վերականգնումը ընդգրկված է Այգեհովիտ-Վազաշեն-Պառավաքար ավտոճանապարհի հիմնանորոգման ծրագրում, որը նախատեսված է իրականացնել 2023թ.-ին»: Հոկտեմբերն ավարտվում է, սակայն ո՛չ Այգեհովիտ-Վազաշեն-Պառավաքար ավտոճանապարհի հիմնանորոգումն է սկսվել, ո՛չ էլ անվտանգության պատի նորոգումը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՐՑԱԽԱՀԱՅԵՐԸ ԼՔԵԼ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Լեռնային Ղարաբաղից ավելի քան 10 000 բռնի տեղահանվածներ հեռացել են Հայաստանից. այս մասին APRI Armenia վերլուծական կենտրոնի «Առաջընթաց անորոշության դայմաններում» համաժողովում ասաց Արցախի նախկին պետնախարար Արտակ Բեգլարյանը:

Նա կարեւորեց տեղահանվածների՝ Հայաստանում որոշակիություն տեսնելը: «Շատերը կարող են հեռանալ Հայաստանից, բայց շատերը կարող են մնալ, եւ դրա համար պետք է պայմաններ ստեղծվեն: Կարեւորը հասկանալն է, որ խնդիրը քաղաքական է, ոչ թե մարդասիրական: Մենք պետք է նայենք պատճառներին, այլ ոչ թե հետեւանքներին»:

Նա կարծում է, որ պատասխանատվության իրենց բաժինը կրում են եւ՛ Հայաստանի իշխանությունները, եւ՛ միջազգային կազմակերպությունները: Բեգլարյանը դժգոհեց ՀՀ կառավարությունում ռազմավարական նպատակի բացակայությունից:

«Նրանք ընտրեցին ձուլման ճանապարհը, եւ ես կցանկանայի տեսնել մարդկանց վերադարձը հայրենիք գոնե բարձր ինքնավարության մակարդակով՝ միջազգային երաշխիքով:

Ռուս խաղաղապահներն ու միջազգային կազմակերպությունները ձախողել են իրենց առաքելությունը: Այժմ հայերի Արցախ վերադարձի համար իդեալականորեն անհրաժեշտ է ՄԱԿ-ի խաղաղապահների տեղակայումը: Բացի այդ, Լեռնային Ղարաբաղը եւ հարակից տարածքները պետք է ապառազմականացվեն»,- նշեց նա:

Բեգլարյանի խոսքով՝ այս ճգնաժամը հակահայկական քաղաքականության վրա հիմնված Ադրբեջանի կողմից իրականացված ցեղասպանության արդյունք է: Բեգլարյանը նշեց, որ կարիքների գնահատումը վաղուց պետք է արվեր, սակայն հույս ունի, որ 2 ամսվա ընթացքում այդ աշխատանքները կավարտվեն:

«Հայաստանի իշխանությունները կենտրոնացած են միայն անձնական կարիքները լուծելու վրա, սակայն խնդրին պետք է մոտենալ Արցախի ժողովրդի շահերի, արցախցիների հավաքական իրավունքների տեսանկյունից»,- հավելեց Բեգլարյանը: Նա մատնանշեց տեղահանվածներին փախստականի կարգավիճակ տրամադրելու անհրաժեշտությունը, որպեսզի նրանք կարողանան այդ հիմքով պետական աջակցություն ստանալ:

«Այս մեկ ամսվա ընթացքում ՀՀ իշխանությունները հայտարարություններ արեցին ֆինանսական աջակցության մասին, սակայն մարդիկ ստացել են ընդամենը 100 հազար դրամ, թեեւ կան բազմաթիվ կարիքներ, որոնք բավարարելու համար ավելի շատ միջոցներ են պահանջում: Խնդիրը նաեւ այն է, որ որոշումները կայացվում են առանց Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների տեսակետները հաշվի առնելու»,- եզրափակեց նախկին պաշտոնյան:

Հավելենք, որ կառավարության այսօրվա նիստում կընդունվի համապատասխան որոշում, որով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր քույրերին եւ եղբայրներին կտրվի ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ: Այս մասին երեկ՝ հոկտեմբերի 25-ին, ԱԺ-ում կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ հայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Այս որոշման նախագիծը մենք բազմիցս քննարկել ենք ամենալայն ֆորմատներով, եւ մեզ համար կարեւոր է եղել հանգել այն որոշմանը, որը առավելագույն հնարավորությունը կտա ԼՂ-ից բռնի տեղահանված մեր քույրերի եւ եղբայրների բոլոր իրավունքները պաշտպանելուն:

Այս որոշման էությունը ԼՂ-ից բռնի տեղահանվածների փախստական լինելու հանգամանքը արձանագրելն է, որպեսզի նաեւ եւ՛ տեղական առումով, եւ՛ միջազգային առումով նրանց պաշտպանելու իրավունքները ավելի ընդլայնվեն»,- ասել է նա: Ըստ վարչապետի՝ որոշումն ընդունելուց հետո ԼՂ-ից տեղահանվածները նաեւ հնարավորություն կունենան դիմելու Հայաստանի քաղաքացիություն ստանալու համար:

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԴԱՍԱԳԻՐՔ ԵՆ ՓՆՏՐՈՒՄ

Սեպտեմբերի 19-ին Արցախում տեղի ունեցած ռազմական գործողություններից հետո շուրջ 100 հազար եւ ավելի մարդ բռնի տեղահանվեց Հայաստան, նրանցից շուրջ 30 հազարը երեխաներ են: Բռնի տեղահանումից հետո գրեթե բոլոր նախարարությունները լծվեցին նրանց աջակցելու գործին, այդ թվում՝ ԿԳՄՍ նախարարությունը: Նախարար Ժաննա Անդրեասյանը հայտնում էր, որ նախարարությունը պատրաստ է նրանց տրամադրել նոր դասագրքեր եւ գրենական պիտույքներ:

«Ժողովուրդ» օրաթերթը հոկտեմբերի 11-ին հարցումով դիմել էր ԿԳՄՍ նախարարությանը՝ հասկանալու համար, թե ինչ փուլում է դասագրքերի տպագրությունը, որտեղից մեզ պատասխանել էին. «Տեղեկացնում ենք, որ 5-րդ եւ 7-րդ դասարանների դասագրքերը տպագրվել եւ բաշխվել են հանրակրթական ուսումնական հաստատություններին, իսկ 2-րդ դասարանի դասագրքերի տպագրությունն ամբողջությամբ ավարտվել է. բաշխման գործընթացը շուտով կավարտվի: Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված աշակերտներից շուրջ 14000-ը արդեն ընդգրկվել են ուսումնական հաստատություններում: Գույքագրման փուլում է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների դասագրքերի պահանջը, որից հետո սահմանված կարգով դպրոցականները կապահովվեն դասագրքերով»:

Բռնի տեղահանումից անցել է գրեթե մեկ ամիս, հարցման պատասխան ստանալուց անցել է գրեթե 10 օր, սակայն մինչեւ հիմա Արցախից բռնի տեղահանված աշակերտները դասագիրք չունեն, նրանք այն փնտրում են աջակցման խմբերում, խնդրում նվիրել դասագրքեր:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՍԵԶՈՆԱՅԻՆ ԱԿՏԻՎԱՑՈՒՄՆԵՐ

Հայաստանում գրիպի եւ կորոնավիրուսի սեզոնային ակտիվացում է նկատվում, սակայն հոսպիտալացումների թվի կտրուկ աճ այս պահին չի գրանցվել: Այս մասին ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում ասաց առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը:

«Մենք նկատում ենք, որ գարնան եւ աշնան ամիսներին կորոնավիրուսը, նաեւ գրիպը նույն վարքագիծն են դրսեւորում, եւ այս պահին սեզոնային ակտիվացում է»,- ասաց Ավանեսյանը: Գրիպի դեմ պատվաստանյութերի պաշարները համալրվել են, պակաս չկա: Նախարարը հորդորեց քաղաքացիներին օր առաջ պատվաստվել գրիպի դեմ: «Այս ընթացքն ամենաճիշտ շրջանն է՝ պատվաստվելու եւ պաշտպանված լինելու»,- նշեց նա: Նախարարի խոսքով՝ գրիպի դեմ պատվաստանյութերն ամեն տարի են մշակվում՝ համապատասխանեցնելով տվյալ տարում շրջանառվող ամենավտանգավոր շտամերին: Պատվաստանյութը եվրոպական արտադրության է, գործում է գրիպի 4 տեսակի շտամերի դեմ: Այս պահին կորոնավիրուսի շրջանառվող շտամերի փոփոխություն չի նկատվում: «Օմիկրոն շտամն է՝ իր տարբեր ենթաշտամերով: Ախտանշանները բավականին նման են գրիպին՝ քթարտադրություն, կոկորդի ցավ, հազ, գլխացավեր: Եվ դժվար է տարբերակել՝ գրիպ է, թե կորոնավիրուս, եթե չի արվում թեստավորում»,- ասաց նախարարը:

Այս պահին հոսպիտալացումների կտրուկ աճ չկա: Մոնիթորինգ արվում է: Եթե նախարարությունը նկատի բարձր ակտիվացում, կտեղեկացնի:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 4 ՃՏՊ. 10 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում շարունակելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտի բաց աճուրդը.

- Կոտայքի մարզ, համայնք Աբովյան, Աբովյան ք., 3-րդ միկրոշրջան, 17 շենք, 16 հասցեում գտնվող 47,88 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 9921329 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը հոլանդական եղանակով՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 13.11.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 13.12.2023թ.-ին:

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ

ԿԿԱՐԳԱՎՈՐՎԻ ՏԱՔՍԻՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հայաստանում կկանոնակարգվի օնլայն տաքսի ծառայությունների գործունեությունը, կսահմանվի պետական տուրք, նաեւ էլեկտրոնային անդորրագրի տրամադրման պահանջ: «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին եւ կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթն ԱԺ նիստում ներկայացրեց տարածային կառավարման եւ ենթակառուցվածքների փոխնախարար Արմեն Սիմոնյանը:

Փոխնախարարը նախ ներկայացրեց, որ ներկայումս հանրապետությունում էլեկտրոնային հարթակների միջոցով թեթեւ մարդատար ավտոմոբիլներով ուղեւորափոխադրման ծառայությունների մատուցումը մեծ կիրառություն ունի, սակայն ոլորտն օրենսդրական կարգավորում չունի: Էլեկտրոնային հարթակներ ստեղծած կազմակերպությունները, որոնք ուղեւորափոխադրման գործունեություն են իրականացնում՝ պատվերներ ընդունելով եւ փոխանցելով անհատ վարորդներին, կարգավորում են իրենց հարթակներով ուղեւորափոխադրման սակագները, սահմանում են փոխադրման պահանջներ (էկոնոմ, կոմֆորտ, բիզնես), առանց իրավական հիմքի, հարկային պարտավորության եւ վերահսկողության:

«Առկա խնդիրների կարգավորման սկիզբը դնելու նպատակով մշակված օրենսդրական փաթեթով առաջարկվում է կանոնակարգել էլեկտրոնային հարթակներով ուղեւորների փոխադրման պատվերներ ձեւակերպող եւ փոխանցող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի գործունեությունը՝ որպես ծանուցման ենթակա գործունեություն: Առաջարկվում է սահմանել էլեկտրոնային հարթակով ուղեւորափոխադրման ծառայության համար պետական տուրքը տարեկան 1 մլն դրամ: Լիցենզավորված մարդատար տաքսի ավտոմոբիլներով, ինչպես նաեւ էլեկտրոնային հարթակների միջոցով թեթեւ մարդատար ավտոմոբիլով ոչ կանոնավոր յուրաքանչյուր փոխադրման համար առաջարկվում է սահմանել արտոնագրի պետական տուրք»,- ասաց Սիմոնյանը:

Պետական տուրքն անկանխիկ վճարման դեպքում 2024 թվականի սեպտեմբերի 1-ից կսահմանվի 1.5 տոկոսի չափով, 2025 թ հունվարի 1-ից՝ 2.5 տոկոսի չափով, 2026-ի հունվարի 1-ից՝ 4 տոկոսի չափով, իսկ կանխիկ վճարման դեպքում համապատասխանաբար 2024-ին՝ 2 տոկոսի չափով, 2025-ին՝ 3.5 տոկոսի չափով, 2026-ին՝ 5 տոկոսի չափով:

Կսահմանվի էլեկտրոնային հարթակով եւ ֆիզիկական անձանց կողմից մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղեւորափոխադրման դեպքում էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի պարտադիր կիրառության եւ էլեկտրոնային անդորրագրի տրամադրման պահանջ: Ոլորտի իրավախախտումների դեպքում սահմանվում են վարչական պատասխանատվության միջոցներ:

«Օրենսդրական փաթեթի ընդունման դեպքում առավել թափանցիկ եւ վերահսկելի կդառնա էլեկտրոնային հարթակների միջոցով ուղեւորափոխադրումների իրականացման գործընթացը, ոլորտում գործունեություն իրականացնելու համար կսահմանվեն հարկային պարտավորություններ, ինչը կնպաստի պետական բյուջե մուտքերի ավելացմանը»,- ասաց փոխնախարարը:

Օրենսդրական փաթեթն ընդունվելու դեպքում ուժի մեջ կմտնի 2024-ի սեպտեմբերի 1-ից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (1)

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝

- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր ք., Շահումյան փողոց, 112 հասցեում գտնվող 177,4 քմ բնակելի տուն, 30,75 քմ (ներքին մակերես) կիսակառույց, 20,44 քմ (ներքին մակերես) անասնաշենք, 3,88 քմ (19,4 գծմ) պարիսպ, 32,9 քմ ծածկ եւ 0,06 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝31600000 ՀՀ դրամ:
- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք,, Մուշ-2 թաղամաս, 4/41 շենք, 29 հասցեում գտնվող 50,29 քմ բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 13700000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումներ՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 13.11.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 01.07.2024թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011)56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am,www.borsa.am կայքեր:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ի փոփոխություն «Բի Էս Թի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ «Ժողովուրդ» օրաթերթի 29.06.2023թ. թիվ 94 (2760) համարի 6-րդ էջում տպագրված «Հրապարակային ծանուցման», տեղեկացնում ենք, որ «Բի Էս Թի» ՍՊԸ-ի կողմից կազմակերպված, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող՝ Արմավիրի մարզ, համայնք Փարաքար, գյուղ Այգեկ, 12-րդ փողոց, 3/1 եւ Արմավիրի մարզ, համայնք Փարաքար, գյուղ Այգեկ, 12-րդ փողոց, 3 հասցեներում գտնվող անշարժ գույքերի աճուրդային փուլերը 30.10.2023թ.-ից շարունակվելու են հոլանդական եղանակով, որպես մեկ միասնական համալիր՝ 254400000 ՀՀ դրամ մեկնարկային գնով:

Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով կամ այցելել www.borsa.am կայք:

«Հրապարակային ծանուցման» մյուս դրույթները մնում են անփոփոխ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ԸՆՏՐՎԱԾՆԵՐԸ

Հոկտեմբերի 26-ին էկրաններին կհայտնվի «Ռոզալի» ռոմանտիկ կատակերգությունը: Հայաստանյան գաղտնի լաբորատորիաներից մեկում գիտնականները կարողանում են ստեղծել յուրօրինակ կին-ռոբոտ: Ռոզալին աչքի է ընկնում ոչ միայն հզոր արհեստական բանականությամբ, այլեւ նրանում ինտեգրված են սինթետիկ հորմոններ, որոնց շնորհիվ կարողանում է մտածել ու զգալ իրական մարդու պես: Սա անհախադեղ ձեռքբերում է նանո-տեխնոլոգիաների ոլորտում:

Որպեսզի Ռոզալին «մարդ դառնա», պիտի ունենա մարդուն բնորոշ բոլոր զգացմունքները՝ սեր, խանդ, կիրք, երջանկություն, ատելություն ու կարոտ: Ռոբոտի փորձարկման վերջին փուլին համաձայնում է մասնակցել պարտքերի մեջ խրված ու սեփական ստերի մեջ խճճված մի երիտասարդ: Եվ եթե «բանական» ռոբոտը կարող է սիրահարվել սովորական մարդուն, ապա անուղղելի ստախոսն ու խարդախը սիրահարվելով կարող է դառնալ իսկական հերոս:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ֆիլմը նկարահանվել է «Շարմ Հոլդինգի» հետ համագործակցությամբ: «Իր ֆիլմադարանում «Շարմ Հոլդինգն» ունի մի շարք ֆիլմեր՝ «Մեր բակը. 25 տարի անց», «Հյուսիս-հարավ», «Փեսացուն կրկեսից», «Poker.az», «Պահանջվում է միլիոնատեր», «Կյանք ու կռիվ», «Կյանք ու կռիվ. 25 տարի անց», «Քայլ ձիով», «Վիշապ» եւ այլն: Այս անգամ եւս ստեղծողները ներկայացրել են որակյալ արտադրանք՝իրենց բնորոշ ոճով»,- «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նշեցին «Շարմ Հոլդինգ»-ից: Ֆիլմի բեմադրող ռեժիսորը Դավիթ Բաբախանյանն է, սցենարի հեղինակները՝ Աշոտ Աբրահամյանը, Դավիթ Բաբախանյանն ու Ռուբեն Ջաղինյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ստեղծողների կողմից սցենարիստների հետ միասին մանրակրկիտ հետազոտություն է իրականացվել նախքան նկարահանումները: «Այսօր արհեստական բանականությունը շատ գրավիչ է, եւ, առհասարակ, միջազգային տենդենց կա այդ ուղղությամբ, ու մենք, ելնելով պահանջարկից, ստեղծել ենք ֆիլմ այն մասին, որ ինչքան էլ արհեստական բանականությունը գնալով հայտնվում է առաջատար դիրքերում, միեւնույնն է, մարդկային զգացմունքները՝ սերը, բարությունը մնում են ամենաարդիականն ու արժեքավորը»,- տեղեկացնում են «Շարմ Հոլդինգ»-ից:

Նկարահանումները անցկացվել են Հայաստանում՝ Երեւանում եւ մարզերում: Ինչ վերաբերում է դերասաններին, նրանք նույնպես ընտրվել են արհեստական բանականության միջոցով: «Արհեստական բանականությունը եկավ, գտավ այն դերասաններին, որոնց մենք հետագայում հրավիրեցինք նկարահանվելու»,- հայտնում են ֆիլմը ստեղծողները: Հավելենք, որ գլխավոր դերերում են Տարոն Իսպիրյանը, Նաստասյա Գոլովկոն, Սուրեն Թումասյանը, Վազգեն Ջաքարյանը, Ալբերտ Սաֆարյանը, Լիլիթ Ավդալյանը եւ այլք:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱԴԵԼԻՆ ՈՒ ԴՐՈՇԸ ⇨

Երգչուհի Ադելը Լաս Վեգասում ունեցած իր համերգից հետո զրուցում էր հանդիսատեսի հետ՝ Հայաստանի դրոշը ձեռքին:

Երգչուհու մարքեթինգային թիմը հրապարակել է հոլովակ, որտեղ Հայաստանի դրոշը ձեռքին նա մոտենում է եւ երկրպագուներից մեկից վերցնում այն նկարը, որը նկարել է, երբ 7 տարեկան է եղել:

Մեկ այլ հրապարակումից պարզ է դառնում, որ դրոշը Ադելին նվիրել է հայ երկրպագուն՝ դերասան Տիգրան Ալթունյանը, որը հայտնի է «Էլենի օրագիրը» սերիալից:

«Ինչ տեղի ունեցավ Վեգասում, կմնա ինձ հետ ընդմիշտ: Եվ ես ուզում եմ շնորհակալություն հայտնել այս հրաշալի կնոջը իմ երազանքն իրականություն դարձնելու համար»,- Ադելի եւ իր համատեղ նկարին կից գրել է Տիգրանը:

ՎՃԱՐ՝ ՈՒՇԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Շատ պարողների համար Մադոննայի հետ համագործակցելը երազանք է, սակայն լեգենդար երգչուհու հետ աշխատելը իրականում ծանր է:

«Պարեր աստղերի հետ» շոուի ժյուրիի անդամ Քերի Էն Ինաբան, որն իր կարիերայի սկզբում շրջագայել է նրա հետ, դա շատ լավ գիտի:

«Նա նախկինում շատ խիստ էր,- Ջենիֆեր Հադսոնի շոուում ելույթի ժամանակ ասել է Ինաբան:- Նա մեկ կանոն ուներ, որի համար ես նրան շնորհակալ եմ. ուշանալու յուրաքանչյուր րոպեի համար պարողը պետք է վճարեր իր աշխատավարձից 100 դոլար»:

Թեեւ նման կանոնը հեշտությամբ կարող էր հիասթափության պատճառ դառնալ, Ինաբան, կարծես, չի նեղացել: Նրա խոսքով՝ այժմ ինքն ամեն տեղ ժամանակին է լինում, նույնիսկ «շատ շուտ է գալիս»: Ինաբան ասել է, որ Մադոննայի մոտ աշխատելն իր երազանքն է եղել՝ չնայած աշխատանքային խիստ պայմաններին: «Այն ժամանակ կային Մայքլ Ջեքսոնը, Փրինսը եւ Մադոննան, այդպես չէ՞: Ես հայտնվեցի Մադոննայի հյուրախաղերին եւ մտածեցի՝ սա այն ամենն է, ինչ ինձ պետք է»,-ասել է նա:

Այն բանից հետո, երբ Ինաբան ավարտել է իր շրջագայությունը երգչուհու հետ, նա 23 տարեկանում հեռացել է պարարվեստից:

ՍՊՈՐՏ

ԿՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ 8 ՇԱԽՄԱՏԻՍՏ

Հայաստանը ներկայացնող գրոսմայստերները մեկնարկում են ՖԻԴԵ-ի «Գրանդ Սվիս» մրցաշարում:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին գրում է Հայաստանի շախմատի ֆեդերացիան: Հոկտեմբերի 25-ից նոյեմբերի 5-ը Մեն կղզում կանցկացվի 2023 թվականի ՖԻԴԵ-ի «Գրանդ Սվիս» մրցաշարը:

Հայաստանից տղամարդկանց մրցաշարին մասնակցում են Հայկ Մարտիրոսյանը, Գաբրիել Սարգսյանը, Հրանտ Մելքումյանը, Շանթ Սարգսյանը, Սամվել Տեր-Սակակյանը եւ Մանուել Պետրոսյանը: Կանանց մրցաշարին մասնակցում են Էլինա Դանիելյանը եւ Մարիամ Մկրտչյանը: Յուրաքանչյուր մրցաշարում 1-ին եւ 2-րդ տեղերը զբաղեցրած շախմատիստները իրավունք են ստանում մասնակցելու 2024 թվականի հավակնորդների մրցաշարին:

ՄԻԼԻԱՆ ԹԻՄԸ

Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի եւ Ֆրանսիայի հավաքականի 24-ամյա հարձակվող Կիլիան Մբապեի մայրը պատմել է, թե մանկության տարիներին որ թիմին է երկրպագել որդին:

«Կիլիանը տանը խոսում էր միայն «Միլանի» մասին: Եթե նրանք պարտվում էին, նա նետում էր հեռուստացույցի հեռակառավարման վահանակը եւ իտալերեն վիրավորական բառեր էր ասում»,- Ֆայզա Լամարիի խոսքը մեջբերում է La Gazzetta dello Sport-ը:

ՎՆԱՍՎԱԾՔ Է ՍՏԱՑԵԼ

Մադրիդի «Ռեալի» 20-ամյա անգլիացի կիսապաշտպան Ջուդ Բելինգեմը վնասվածք է ստացել պորտուգալական «Բրագայի» դեմ Չեմպիոնների լիգայի երրորդ տուրի խաղում: Իտալացի Կառլո Անչելոտիի գլխավորած թիմը հաղթել էր 2:1 հաշվով, հաղթական գոլը խփել էր Բելինգեմը, որը վնասվածքի պատճառով փոխարինվել էր 89-րդ րոպեին:

«Լուրջ վնասվածք չկա: Բելինգեմի մասնակցությունը «Բարսելոնայի» դեմ առաջիկա խաղին վտանգված չէ»,- Անչելոտիի խոսքը մեջբերում է AS-ը:

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ԽԱՂԻՆ

Իտալիայի գավաթակիր եւ սուպերգավաթակիր Միլանի «Ինտերի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը Չեմպիոնների լիգայի երրորդ տուրի տնային խաղում ավստրիական «Զալցբուրգի» նկատմամբ 2:1 հաշվով հաղթանակից հետո լուսանկարներ է հրապարակել սոցիալական ցանցերում՝ գրառելով. «Աշխատանքը Չեմպիոնների լիգայում կատարված է, հաջորդ կանգառը՝ Ա Սերիա, «Ինտեր» - «Ռոմա»»:

Մխիթարյանը «Զալցբուրգի» դեմ խաղացել էր մեկնարկային կազմում, սակայն փոխարինվել էր ընդմիջմանը:

Չեմպիոնների լիգայի D խմբում իսպանական «Ռեալ Սոսիեդադն» ու «Ինտերը» վաստակել են 7-ական միավոր, որն առաջին տեղում է:

Իտալիայի առաջնության 10-րդ տուրի «Ինտեր» - «Ռոմա» հանդիպումը տեղի կունենա հոկտեմբերի 29-ին:

● Հոկտեմբերի 25-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Բանալի երկուսի համար» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱՔԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ անել, եթե իմ աշխատավարձը կամ թոշակը արգելադրվել են Հարկադիր ծառայության կողմից:

Աննա Հարությունյան (64 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Այդ դեպքում անհրաժեշտ է գործատուից՝ աշխատավարձի դեպքում, եւ սոցիալական տարածքային ստորաբաժանումից՝ կենսաթոշակների եւ նպաստների դեպքում, վերցնել տեղեկանք, որում նշված կլինի ստացվող եկամուտների չափը, բանկը, որի միջոցով Դուք ստանում եք այդ գումարները, այն հաշվեհամարը, որից փոխանցվում են այդ գումարները: Տեղեկանքը վերցնելուց հետո այն՝ դիմումին կից, պետք է ներկայացնեք Դատական ակտերի հարկադիր ծառայության այն բաժին, որտեղ կիրառվել են արգելանքները՝ դիմումով խնդրելով պահումները կատարել միայն սահմանված տոկոսների չափով:

ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան հիմքերի առկայության դեպքում կարող է բռնագանձում տարածել անձի եկամտի՝ աշխատավարձի, կամավոր կուտակային կենսաթոշակների, կրթաթոշակի եւ մտավոր սեփականության օբյեկտների օգտագործմամբ ստացված վարձատրությունների, պետական կենսաթոշակների վրա: Պետք է հաշվի առնել, որ բռնագանձումը կարող է տարածվել եկամտի միայն որոշակի մասի վրա (ոչ ամբողջությամբ): Մասնավորապես, եթե բռնագանձումը կատարվում է ալիմենտ վճարելու կամ առողջությանը, կերակրողի մահվամբ պատճառված վնասը կամ հանցագործությամբ պատճառված վնասը հատուցելու նպատակով, ապա, վերոնշյալ հիմքերով, ստացվող եկամուտներից (բացառությամբ կենսաթոշակների) բռնագանձումը կարող է տարածվել մինչեւ 75%-ի չափով, իսկ այլ տեսակի պահանջների բավարարման նպատակով կարող է տարածվել մինչեւ 50%-ի չափով, անձի պետական կենսաթոշակներից կարող է բռնագանձվել մինչեւ 30%-ի չափով:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. ԵՊՀ-ում ե՞րբ է կազմակերպվում առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելությունը:

Սոնա Մայիլյան (30 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Առկա ուսուցմամբ (անվճար եւ վճարովի հիմունքներով) ասպիրանտուրայի ընդունելությունը սովորաբար կազմակերպվում է ընթացիկ տարվա մայիս-հունիս ամիսներին:

Երեւանի պետական համալսարան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ասպիրանտուրա ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման եւ մասնագիտական քննության անցկացման հստակ ժամկետները ԵՊՀ-ն դիմորդներին ներկայացնում է ՀՀ ԿԳՄՍՆ սահմանած ժամանակացույցը ստանալուց հետո՝ տարածելով համապատասխան հայտարարություն(ներ):

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի ազատ ոճի ըմբշամարտի երիտասարդական հավաքականի անդամ Մեժլում Մեժլումյանը բրոնզե մեդալ է նվաճել Ալբանիայի մայրաքաղաք Տիրանայում ընթացող՝ մինչեւ 23 տարեկանների աշխարհի առաջնությունում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Մարզ	Ջերմաստիճան (գիշեր / ցերեկ)	Մարզ	Ջերմաստիճան (գիշեր / ցերեկ)
Շիրակ	+1 +4 +10 +16	Արարատ	+9 +11 +21 +23
Կոտայքի լեռներ	+2 +5 +10 +14	Արմավիր	+8 +11 +20 +22
Կոտայքի նախալեռներ	+7 +9 +16 +18	Վայոց ձորի լեռներ	+2 +3 +10 +13
Գեղարքունիք	+1 +5 +10 +14	Վայոց ձորի նախալեռներ	+8 +11 +21 +24
Լոռի	+4 +7 +16 +19	Սյունիքի հովիտներ	+10 +13 +20 +22
Տավուշ	+8 +10 +19 +23	Սյունիքի նախալեռներ	+4 +8 +14 +18
Արագածոտնի լեռներ	0 +4 +10 +13	ԼՂՀ	+9 +13 +21 +24
Արագածոտնի նախալեռներ	+7 +10 +18 +21	Երեւան	+9 +12 +20 +23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **25.10.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*